ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ՄԵՂՎԱԲՈՒԹԱԿԱՆ ՀՈՆԱԼ ԿԱՅԱՆ

Ի. ՇՉԵԴՐԻՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ ՇԱՏ ՄՈՄ ՍՏԱՆԱԼ

ԽՄԲԱԳՐԵՑ Վ. ԴԱՎԹՅԱՆ

638
Շ-90

ԳՈՒՂՇՐԱՏ ● 1937 ● ԵՐԵՎԱՆ

Պատմող՝ Ի. Շչեդրին
Մտքագրեց՝ Վ. Դաղեսյան
Տեխ.-խմբ. և սրբագրիչ՝ Ռ. Այվազյան
Դրավոնի լիպոր № 1193
Հրատար. № 441, տիրաժ 1500, պատվեր № 528
Հանձնվել է արտադրության 1937 թ. հունիսի 10-ին
Տպագրված է ապագրելու. 1937 թ. հուլիսի 8-ին

Դյուզիրատի տպարան Երևան, Նալբանդյան, 11

24 SEP 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԶՈՆԱԼ ԿԱՅԱՆ

638 ԱՐ
Շ-90

Ի. ՇՉԵԴՐԻՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ ՇԱՏ ՄՈՄ ՍՏԱՆԱԼ

ԽՄԲԱԳՐԵՑ Վ. ԴԱԳԵՍՅԱՆ

ԳՅՈՒՂՀՐԱՏ ● 1937 ● ԵՐԵՎԱՆ

ОПИС 932 А 5
22.985
15.07.2013

Наркомзем Армянск. ССР
Пчеловодная зон. ст.

Как получить от пчелиной семьи больше воску

1010
42926

Сельхозгиз, Ереван, 1937 г.

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՄԵՂՎԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ ՇԱՏ ՄՈՄ ՍՏԱՆԱԼ

Մեղուների զարգացման և նրանց արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ մեղրամոմի պահանջը բավարարել մեր ներկա կարևոր խնդիրներից մեկն է։ Այդ խնդրի լուծումն որեցոր աճող մեր մեղվաբուծական տնտեսությունների զարգացման ճանապարհին ամենախոշոր խոչընդոտներից մեկն է հանդիսանում։ Այդ հանգամանքը կարելի յե բացատրել նախ՝ նրանով, որ մինչև այժմ մեր մեղվանոցներում գործադրվող խնամքի ձևերով մեղուների յուրաքանչյուր ընտանիքից շատ քիչ՝ միայն 200—300 գրամ մոմ և ստացվում սեզոնի ընթացքում, յերկրորդ՝ նրանով, որ մեր յերկրում, շնորհիվ կոլտնտեսային ստալինյան կանոնադրության և մեղվաբուծական խորհտնտեսությունների մեղվի ընտանիքները կոլտնտեսություններին հանձնելու վերաբերյալ Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի վորոշման, մեղվաբուծությունը, մանավանդ վերջին տարիները, շատ արագ տեմպով է զարգանում։ Նրա զարգացման այդ արագ տեմպը պահանջում է մաքուր մեղրամոմից

պատրաստված համապատասխան քանակությամբ մոմաթերթ։ Առանց այդ զարգացման նման տեմպը, որն ամեն տեսակետից քաջալերելի է և պետք է քաջալերել, հնարավոր չէ ապահովել։

Մեղրամոմից պատրաստված մոմաթերթը մինչև այժմ հնարավոր չի եղել այլ նյութով կամ կառուցվածքով փոխարինել։ Նա գործադրվում է ռացիոնալ մեղվաբուծության մեջ՝ բարձր որակի չեչեր ստանալու և այդպիսով մեղվի ընտանիքների արտադրողականությունը բազմապատիկ անգամ բարձրացնելու համար։ Բացի այդ, մեղրամոմը խիստ արժեքավոր նյութ է հանդիսանում ընդհանրապես արդյունաբերության և մասնավորապես մեր սոցիալիստական մեծ յերկրի պաշտպանության, ավիացիայի և այլ անհրաժեշտ կարիքների համար։

Մեր մեղվաբուծական խորհտնտեսությունները, կոլտնտեսային մեղվաբուծական ֆերմաները և մենատնտեսների մեղվանոցները վոչ միայն չեն կարողանում մեր յերկրի արդյունաբերության և պաշտպանության համար անհրաժեշտ մեղրամոմը տալու, իրենց մինիմալ բաժինը բերել, այլև նույնիսկ չեն կարողանում իրենց մեղվանոցների պահանջը բավարարելու չափ մոմ ստանալ մեղուներից և այդպիսին ձեռք բերելու համար գնում են յեղբայրական այլ հանրապետություններ, որոնք, ինչպես տեսնում ենք,

մեղրամոմ արտադրելու տեսակետից մեզնից շատ առաջ են գնացել։

Մինչև այժմ ԽՍՀՄ շատ մասերում մեղուներից առավելագույն չափով մոմ ստանալու համար գործադրում էին, այսպես կոչված՝ «կառուցողական շրջանակներ»։ Ռեշը կառուցողական շրջանակների գործադրումը հիմնավորում է, յենթադրելով, որ մեղվի ընտանիքում կա աշխատանքի մի որոշ ժամանակաշրջան, որի ընթացքում գոյություն է ունենում կառուցող մեղուների մի հատուկ խումբ։ Մեղուների այդ խումբը մոմ արտադրելու և չեչ կառուցելու համար հավաքվում է փեթակի չեչերից ազատ մի մասում. բավական է այդ ժամանակաշրջանում փեթակում՝ ընի կողքին դնել 1—2 կառուցողական շրջանակ, որպեսզի կառուցող մեղուներն այդ շրջանակների վրա հավաքվեն մոմ արտադրելու և չեչ կառուցելու համար, և դրանով էլ ոգտագործվի մեղվի ընտանիքի մոմարտադրողականության ունակությունը։

Կառուցողական շրջանակ ասելով պետք է հասկանալ մի սովորական շրջանակ, որը գործադրվում է մեղվի փեթակում և որի վրա փոխանակ լրիվ մոմաթերթի, կպցնում են մի բարակ շերտ մոմաթերթ։ Յերբ մեղվի ընտանիքում սկսվում է կառուցողական աշխատանքի ժամանակաշրջանը (ըստ Ռեշի՝ գործի է անցնում կա-

ռուցող մեղուների խումբը), կառուցողական շրջանակ է դրվում փեթակում, ընի մեկ կամ երկու կողմերից (տես նկար 1), նայած մեղուների մոմ արտադրելու տեմպին։ Ցերը մեղուներն սատիճանաբար մոմ են արտադրում և չեչ կառուցում, այդ շրջանակների վրա, մեղվապահը 3—4 որը մեկ անգամ կտրատում է այդ չեչը, միշտ թողնելով կառուցողական շերտը՝ հետագա կառուցողական աշխատանքները հիշատացնելու համար։ Այս մեթոդով մեկ սեզոնի ընթացքում մի ընտանիքից միջին հաշվով ստացվում է 700—800 գրամ մոմ։

Մեզ մոտ մինչև այժմ մոմի արտադրության համար խնամքի առանձին վոչ մի ձև չի գործադրվում, բացի այն, վոր յերբ մեղուների կառուցողական աշխատանքի շրջանն սկսվում է (ոժանդակ բերքի առակայության պայմաններում), ըստ պահանջի ընտանիքին տրվում են լրիվ մոմաթերթով շրջանակներ՝ սկզբում նրա բունը լայնացնելու, և հետագայում, յեթե ընտանիքին տրվում է կորպուս կամ վերնահարկ, մեղր ստանալու համար։ Այս ձևով, նայած մեղրաբերքի տեվողությանը, մի ընտանիքից միջին հաշվով ստացվում է 200—300 գրամ մոմ մի սեզոնի ընթացքում։

Վերջերս, Ուկրաինայի մեղվաբուծական գիտահետազոտական ինստիտուտի գիտ-աշխատող

ընկ. Կ. Ֆ. Տարանովը՝ աշխատելով մեղուների մոմարտադրողականության ֆիզիոլոգիայի հարցերի շուրջը, ապացուցել է, վոր մոմ արտադրելը մեղուների աշխատանքի առանձին ստադիա չի կազմում, ինչպես Ռեշն է յենթադրում, և մեղվի ընտանիքում կառուցող մեղուների առանձին խումբ գոյություն չունի, այլ կառուցող մեղուները միշտ փոփոխվում են և մոմարտադրումը կատարվում է վորդերի կերակրման համար կաթնահյութ արտադրելու հետ միաժամանակ։ Կերակրման համապատասխան պայմաններում ամեն մի մեղու վորդ կերակրելու հետ միևնույն մոմ է արտադրում։ Ցերը մոմային գեղձերում բավականին մեծ քանակությամբ մոմ է կուտակվում և ձևավորվում են մոմային թեփուկները, մեղուն անցնում է փեթակի չեչերից ազատ տեղերը, դարսում այդ մոմը և վերադառնում իր աշխատանքին—շարունակում վորդերի կերակրումը, մինչև վոր իր մոմային գեղձերում դարձյալ կուտակվեն մոմային թեփուկներ, և այսպես մինչև վերջ։

Ընկ. Տարանովը, իր փորձերի տվյալներից յելնելով, յեկել է այն յեզրակացության, վոր կառուցողական շրջանակներ գործադրելու ժամանակ լրիվ չափով չի ոգտագործվում բոլոր մեղուների մոմ արտադրելու ունակությունը, և վոր վորդեր կերակրելու ժամանակ մոմ արտա-



Նկար 2. Կառուցողական շրջանակներով վերնադրի դրվածքը բնի վրա և շրջանակների դասավորումը։



Նկար 1. Կառուցողական շրջանակների գործածությունը բնում։

■ մեղր. ▨ վորդ □ դատարկ չեշ։

դրող մեղուների մեծ մասը բնում դատարկ տարածությունների չի հանդիպում, վորպեսզի կարողանա իր մոմային գեղձերում կուտակված մոմը դարսել—գործադրել չեշերի կառուցման համար։ Այդ հանգամանքն սկզբում դանդաղեցնում է մոմ արտադրող գեղձերի գործունեությունը և հետագայում բոլորովին դադարեցնում այն։

Պարզ է, վոր այդպիսի պարագայում մեղվի ընտանիքից կստացվի համեմատաբար քիչ քանակությամբ մոմ, քան այդ իսկապես հնարավոր է։ Այդ է պատճառը, վոր մեր մեղվանոցներում, վորտեղ կառուցողական շրջանակների փոխարեն գործադրվում են լրիվ մոմաթերթով շրջանակներ, ստացվում է շատ ավելի քիչ քանակությամբ մոմ, քան թե հնարավոր է ստանալ կառուցողական շրջանակներ գործադրելիս։

Այս բոլորի հիման վրա ընկ. Տարանովը գտնում է, վոր մեղուների մոմ արտադրելու ունակությունը լրիվ չափով ոգտագործելու համար պետք է կերակրող մեղուներին հնարավորություն տալ, վորպեսզի նրանք իրենց մոմային գեղձերում արտադրված մոմը կարողանան անմիջապես գործադրել չեշեր կառուցելու համար։ Դրա համար անհրաժեշտ է կերակրող մեղուների մոտ ստեղծել չեշից ազատ տեղեր։ Իսկ այդպիսի ազատ տեղեր ստեղծելու համար ընկ. Տարանովն առաջարկում է հետևյալ մեթոդը։

Մոմ արտադրելու համար բարենպաստ պայ-

մանների ժամանակաշրջանում, փեթակի (ընի) վրա պետք է դնել 8—10 սանտիմետր բարձրություն ունեցող վերնադիր (մագազին)՝ վերին բաժանարարներով, և ընում յեղած շրջանակները դասավորել հետևյալ կերպ. առաջին շրջանակը թողնել փեթակի (ընի) մեջ, պատին մոտ, յերկրորդ շրջանակը՝ բարձրացնել վերնադրի մեջ և կախել նույն կողմը, յերկրորդ շրջանակի տեղ։ Յերրորդ շրջանակն առաջինի նման թողնել փեթակում։ Չորրորդ շրջանակը բարձրացնել վերնադրի մեջ և կախել իր համապատասխան տեղը, և այսպես հերթական կարգով դասավորել բոլոր շրջանակները, մեկը ընում, մյուսը վերնադրում։ Այդպիսով շրջանակներից վեցը՝ մեջ ընդ մեջ, կախված կլինի փեթակից (ընից), իսկ մյուս վեցը՝ վերնադրից (տես նկար 2)։ Վերնադրի մեջ. շրջանակների արանքում ստեղծված դատարկ տարածություններում պետք է դնել մոմաթերթի բարակ շերտով մոմակալած քառանկյունի ձողեր (դերադասելի յե գործածել շրջանակի վերին ձողեր)։

Շրջանակներն այս ձևով դասավորելիս, մոր ձվարկության համար նախապես ընում յեղած չեչերի տարածությունը մնում է նույնը։ Մայրը ձվում է թե ընի և թե վերնադրից կախված չեչերի վրա, այնպես որ մոր ձվարկության պայմանները չեն փոխվում։ Միևնույն ժամանակ վորդ

կերակրող ամեն մի մեղվի համար այստեղ հեթ ստեղծվում է մոմ արտադրելու և արտադրածն անմիջապես դասավորելու հնարավորություն։

Ըստ ընկ. Տարանովի՝ մեղվի ընտանիքի մոմ արտադրելու ունակությունը սերտ կերպով կապված է վորդի կերակրման հետ։ Մեղուները վորքան մեծ քանակությամբ վորդ խնամեն, այնքան ավելի շատ մոմ են արտադրում։

Յերբ մեղուներն սկսում են մոմ արտադրել և չեչեր կառուցել, վերնադրում, ձողիկների վրա կառուցված մոմը (չեչը), ինչպես և վերնադիրներից կախված ընի չեչերի ներքին մասերում կառուցված մոմը 3—4 որը մեկ անգամ պետք է կտրել, և չթողնել վոր մայրը նրանց մեջ ձվարկի։ Մոմերը կտրատելուց հետո շրջանակները և կողերը պետք է դարձյալ կախել իրենց նախկին տեղը։

Յեթե վորևե դեպքում վերնադրից կախված շրջանակների վերին մասում չեչերը հատացած են, պետք է այդ ավելորդ մասերը կտրել. իսկ կտրված չեչերի մեջ յեթե մեղր լինի, պետք է ցանց ունեցող ամանի մեջ գցել, վորպեսզի մեղրը մոմից անջատվի։

Գլխավոր մեղրաբերքի ընթացքում մեղր ստանալու նպատակով գործադրվելիք վերնահարկերը կամ մագազինները պետք է դնել մոմային վերնադիրների վրա (տես նկար 3)։



Նկար 3. Վերնահարկի կամ կորպուսի դրվածքը կառուցողական շրջանակներ ունեցող վերնադրով փեթակի վրա։

Մոմաբուծության ժամանակաշրջանը վերջանալուց հետո վերնադիրները պետք է վերցնել և շրջանակները սովորական ձևով դասավորել բնում։

Մեղվի ընտանիքներից շատ մոմ ստանալու համար ընկ. Տարանովի կողմից առաջարկված այս ձևը 1936 թվի սեզոնի ընթացքում փորձարկված է Ուկրաինայի ԽՍՀ-ի բազմաթիվ կոլտնտեսությունների մեղվաբուծական ֆերմաներում և ստացված են շատ դրական արդյունքներ։ Բերենք մի քանի օրինակ։

«Նովի Ժիզնյա» կոլտնտեսության մեղվանոցի մեղվապահ ընկ. Սավչենկոն իր փորձարկած ընտանիքներից միջին հաշվով ստացել է հետևյալ արդյունքը.

	Մոմ	Մեղր
Առանց կառուցողական շրջանակների	590 գրամ,	36,8 կգ
Կառուցողական շրջանակներով . . .	1058 »	36,9 »
Կառուցողական շրջանակ վերնադիրներում	2610 »	36,8 »

Այս փորձն ավելի մեծ չափով գործադրված է Չերնիգովյան մարզի կոլտնտեսություններում և մեկ մեղվի ընտանիքից միջին հաշվով ստացված է մոմի հետևյալ քանակը՝ գրամներով (տես № 1 աղ.՝ էջ 14)։

Նույն մարզի տարբեր շրջաններում, մեղրաբերքի տարբեր տեվողության և բերքի ոգտագործման տարբեր պայմաններում, մեղվի մեկ ընտանիքից միջին հաշվով ստացված է հետևյալ արտադրանքը (տես № 2 աղ.)։

Աղյուսակ № 1

№ №	Կոլտնտեսությունների անունը	Կառուցողական շրջանակներով վերնադիրներ ունեցող ընտանիքներից	Կառուցողական շրջանակներ ունեցող կոնտրոլ ընտանիքներից
1	«Պերեբուտովա»	2500	1400
2	Մայիսի 1-ի անվան	2600	370
3	ԼԿՅԵՄ-ի 15-ամյակի անվան . . .	2586	1200
4	Հոկտեմբերի 13-ամյակի անվան . . .	2250	1260
5	Կիրովի անվան	2310	881
6	«Դորբոբուտ»	2050	777

Աղյուսակ № 2

Ամիսների №-ը	Կառուցողական շրջանակներով վերնադիրներ դնելու և վերցնելու ժամանակը	Կառուցողական շրջանակներով վերնադիր ունեցող ընտանիքներից		Կառուցողական շրջանակ ունեցող կոնտրոլ ընտանիքներից	
		Մոմ (գրամներով)	Մեղր (կիլոգրամներով)	Մոմ (գրամներով)	Մեղր (կիլոգրամներով)
I	20/V—10/VII	1057	12,7	370	13,2
II	25/V—25VII	1975	16.9	635	14,8
III	30/V—10/VIII	2586	18.1	1105	17,9
IV	5/VI—20/VIII	2978	21,5	936	22,0

Լենինի անվան կոլտնտեսության 2-րդ մեղվանոցի մեղվապահ Սամոկիշն իր փորձարկած և կոնտրոլ ընտանիքներից ստացել է հետևյալ արդյունքը (աղ. № 3)։

Աղյուսակ № 3

Կառուցողական շրջանակներով վերնադիր ունեցող ընտանիքներից			Կառուցողական շրջանակ ունեցող կոնտրոլ ընտանիքներից		
Ընտանիքի № №-ը	Մոմ (գրամ)	Մեղը (կիլոգրամ)	Ընտանիքի № №-ը	Մոմ (գրամ)	Մեղը (կիլոգրամ)
14	2835	26,5	15	360	28,3
28	2970	29,4	3	624	27,4
31	2840	30,2	6	839	30,9
38	2860	21,8	9	668	23,1
24	2790	29,6	17	508	30,2
29	3010	24,3	26	714	25,2
35	3060	27,9	11	715	28,8
32	2795	31,8	13	638	30,5
34	2480	32,2	40	692	30,6
38	2880	30,3	43	850	29,7

Ընկ. Տարանովն իր փորձերի ընթացքում, բերքի վոչ բարենպաստ պայմաններում, կառուցողական շրջանակներով վերնադիր ունեցող յուրաքանչյուր մեղվի ընտանիքից միջին հաշվով ստացել է 2939 գրամ մոմ և 17,3 կիլոգրամ մեղր (բացի պաշարից), իսկ կառուցողական շրջանակներ ունեցող յուրաքանչյուր կոնտրոլ ընտանիքից միջին հաշվով՝ 829 գրամ մոմ և 17,2 կիլոգրամ մեղր։

Ինչպես ընկ. Տարանովի, նույնպես և Ուկրաինական ԽՍՀ-ի բազմաթիվ խորհտնտեսություններում և կոլտնտեսություններում դրված մասսայական փորձերը, ինչպես տեսնում ենք, ցույց են տալիս, վոր կառուցողական շրջանակներով վերնադիրների գործածությամբ մոմ ստանալու այս նոր յեղանակով հնարավոր է յուրաքանչյուր մեղվի ընտանիքից մի սեզոնի ընթացքում 3 և ավելի կիլոգրամ մոմ ստանալ, առանց այդ ընտանիքների մեղրաբերքը պակասեցնելու և կամ նրանց զարգացման վրա բացասաբար ազդելու։ Բացի այդ, փորձերը նույնպես ցույց են տվել, վոր վերնադիրների գործածությունը մեծ չափով պակասեցնում է մեղուների բնական ձագ տալու հակումը, իսկ մեղրաբերքի ոգտագործման համար մեղվի ընտանիքներին տեղից տեղ փոխադրելիս, շրջանակների միջև գտնված ազատ տարածությունը մեղուների կողմից ոգտագործվում է ազատ կերպով շարժվելու և վեթակի ոգավորումը կանոնավորելու համար և այլն։

Ուկրաինայի ԽՍՀ-ի ստախանովական մեղվաբուծները՝ չբավականանալով և չհանգստանալով մեղուներից շատ մոմ ստանալու գործում

1010
42926

ձեռք բերած իրենց հաջողություններով, 1937 թվի փետրվարին Մոսկվայում կայացած առաջավոր մեղվաբուծների խորհրդակցությունում պարտավորություն ստանձնեցին մեղվի ամեն մի ընտանիքից մինչև 5—6 կիլոգրամ մոմ ստանալ։

Ինչպես մեր մեղվաբուծության, նույնպես և մեր արդյունաբերության համար անհրաժեշտ մեղրամոմի սուր կարիքը բավարարելու գործում Հայկական ԽՍՀ-ի մեղվապահները նույնպես շատ մեծ աշխատանք ունեն կատարելու։

Մեղվաբուծական զոնալ կայանի այս տարվա աշխատանքները, մեր կոլտնտեսությունների մեղվաբուծական ֆերմաներին մոմաթերթ մատակարարելու գործում, ցույց տվին, որ մոմի կարիքը շատ ավելի սուր կերպով է զգացվում Հայաստանի մեղվաբուծության զարգացման ընթացքում։ Այդ իսկ տեսակետից մենք պարտավոր ենք մեծ ուշադրություն դարձնել Ուկրաինայի մեղվաբուծ ընկերների ձեռք բերած փորձի հաջողություններին և սկսած 1937 թվից մեղուներից շատ մոմ ստանալու այդ փորձը լայն չափով կիրառել մեր բոլոր մեղվանոցներում։

Փորձերի կազմակերպման գործում խոշոր դեր ունեն կատարելու մեր շրջանային հողաժիները՝ հանձինս իրենց շրջ. մեղվաբուծ հրահանգիչների։ Փորձերը պետք է կազմակերպել հետևյալ ձևով։

Մեղվանոցներում առանձնացնել միանգամայն նորմալ և առողջ մեղուների քսան ընտանիք և բաժանել նրանց, ուժի և շրջանակների տեսակետից, հավասար յերկու խմբի՝ ամեն մի խմբում 10 ընտանիք։

Հենց վոր սկսի ոժանդակ մեղրաբերքը, առաջին խմբի 10 ընտանիքների փեթակների վրա պետք է դնել կառուցողական շրջանակներով վերնադիրներ։ Դրանք կլինեն փորձնական ընտանիքներ։ Մյուս խմբի 10 ընտանիքները, վորպես կոնտրոլ, պետք է խնամել սովորական ձևով, այսինքն՝ մոմաթերթով շրջանակներ տալ ըստ պահանջի։

Պահանջված վերնադիրները պատրաստելու համար կարելի յե գործածել նաև հին և անպետք մագազիններն ու կորպուսները։

Ինչպես ասացինք, շրջանակները (չեչերը) ընում և վերնադրում պետք է դասավորել հաջորդաբար՝ կախելով մեկը ընից, մյուսը՝ վերնադրից այնպես, վոր նրանցից 6-ը մեջ ընդ մեջ կախված լինի ընից, իսկ մյուս 6-ը՝ վերնադրից։ Վերնադրից կախված շրջանակների միջև՝ բաց տեղերում պետք է դնել մոմաթերթի բարակ շերտով մոմակալած շրջանակի վե-

4074

ըին ձողեր։ Զոդիկների և վերնադրից կախված շրջանակների տակը կառուցված չեչերը 3—4 որը մեկ անգամ պետք է կտրել, հավաքել և յուրաքանչյուր ընտանիքից ստացվածն առանձին կշռել և հաշվի առնել՝ հետագայում նորմալ ձևով ինամված կոնտրոլ ընտանիքներից ստացված մոմի քանակի հետ համեմատելու համար։ Դրա համար պետք է նույնպես հաշվի առնել կոնտրոլ ընտանիքների գործած նոր չեչերի քանակը։ Յուրաքանչյուր չեչը կառուցելու համար (մոմաթերթի վրա) մեղուները գործադրում են 50—60 գրամ մոմ։

Մոմի հաշվառման հետ մեկտեղ պետք է, նույնպես առանձին, հաշվի առնել (կշռել) փորձաընտանիքների և կոնտրոլ ընտանիքների յուրաքանչյուրից ստացված և պաշար թողնված մեղրի քանակը։ Թողնված պաշարի քանակը կարելի է հաշվի առնել նաև աչքի չափով։

Այսպիսով հնարավոր կլինի պարզել և համեմատել փորձաընտանիքներից և կոնտրոլ ընտանիքներից ստացված մեղրի և մոմի քանակը։

Ձեռք բերված արդյունքների մասին պետք է անմիջապես տեղեկացնել շրջհողբաժիններին և նրանց միջոցով, կամ ուղղակի Մեղվաբուծական զոնալ կայանին։

Փորձի սկզբում կամ աշխատանքի ընթացքում անհրաժեշտ ցուցումների կարիք ունենալու դեպքում պետք է գրավոր կամ բանավոր դիմել Մեղվաբուծական զոնալ կայանին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0292214

Գին 20 կ.

872

22.985

Наркомзем Армянск. ССР
Пчеловодная зон. ст.

Как получить от пчелиной семьи больше воску

Сельхозгиз 1937 Ереван